ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Աստվածակառույց սուրբ Էջմիածնի բարձունքից երջանիկ ենք Ձեզ վերստին բերելու մեծ ավետիսը ամենահաղթ Հարության Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի: Լուսաշող շնորհները հրաշալի Հարության, թող առատապես բաշխվեն տիրախնամ սուրբ Աթոռիդ բոլոր եկեղեցական համայնքներին հառավել շինություն մեր հավատավոր և հավատացյալ ժողովրդի հոգեվոր ու ազգային մշակութային կյանքի:

Ձեզ, սիրելի Սրբազան Եղբայր, ձեր եկեղեցիների ուխտապահ սպասավորներին ու ձեր եկեղեցյաց վարչական մարմինների բոլոր անձնվեր անդամներին, մաղթում ենք մշտանորոգ հոգևոր ներշնչանքներ ու անսպառ եռանդ, շարունակելու ձեր կրոնական ու ազգապահպան սրբազան առաքելությունը:

Աղոթում ենք նաև անձանձրույթ, որ լուսավորված աշխարհի Փրկչի Հարության շնորհներով, մեր օրերի մարդիկ ու ժողովուրդները համայն գտնեն ճշմարիտ ուղին իրենց կյանքի խաղաղության, համերաշխ գործակցության ու բարօրության:

«Արդ, Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց, քանզի մարդով եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց: Որպէս Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքեան կենդանացցեն» (Ա. Կորնթ. 20—22):

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: